ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ

Հայցադիմումը վարույթ ընդունելու, պատասխանողից ապացույցներ պահանջելու

և դատական ակտի հրապարակման օր նշանակելու մասին

ԵԴ2/9541/02/24 քաղ. Երևան
25 Նոյեմբերի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ն.Ավետիսյանս ծանոթանալով Նէեմիա Արթուրի Ավակիմյան ԱՁ-ի ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումին և կից փաստաթղթերին.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Դատարանի 15.11.2024թվականի որոշմամբ վերադարձվել է Նէեմիա Արթուրի Ավակիմյան ԱՁ-ի ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի համայնքապետարանի՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի համայնքապետարանի կարիքների համար ապրանքի ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/31» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.10.2024թ.-ին կազմված թիվ 5 արձանագրությամբ՝ «ՆԷԵՄԻԱ ԱՎԱԿԻՄՅԱՆ ԱՐԹՈՒՐԻ» Ա/Ձ-ին պայմանագիր ստորագրելու իրավունքից զրկելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու), ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի համայնքապետարանի կարիքների համար ապրանքի ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/31» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.10.2024թ.-ին կազմված թիվ 5 արձանագրությամբ՝ «ՆԷԵՄԻԱ ԱՎԱԿԻՄՅԱՆ

ԱՐԹՈՒՐԻ» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով համայնքի ղեկավարին դիմելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Հայցվորը վերացրել է հայցադիմումի թերությունները և այն կրկին ներկայացրել դատարան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Նույն մասի երկրորդ պարբերության համաձայն՝ նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, գտնում եմ, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Միաժամանակ, ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի համայնքապետարանից պետք է պահանջել թիվ «ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/31» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.10.2024թ.-ին կազմված թիվ 5 արձանագրությամբ՝ «ՆԷԵՄԻԱ ԱՎԱԿԻՄՅԱՆ ԱՐԹՈՒՐԻ» Ա/Ձ-ին պայմանագիր ստորագրելու իրավունքից զրկելու մասին կայացված որոշման և թիվ «ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/31» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.10.2024թ.-ին կազմված թիվ 5 արձանագրությամբ՝ «ՆԷԵՄԻԱ ԱՎԱԿԻՄՅԱՆ ԱՐԹՈՒՐԻ» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով համայնքի ղեկավարին դիմելու մասին կայացված որոշման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածնով, Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1.Նէեմիա Արթուրի Ավակիմյան ԱՁ-ի ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի համայնքապետարանի՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի համայնքապետարանի կարիքների համար ապրանքի

ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/31» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.10.2024թ.-ին կազմված թիվ 5 արձանագրությամբ՝ «ՆԷԵՄԻԱ ԱՎԱԿԻՄՅԱՆ ԱՐԹՈՒՐԻ» Ա/Ձ-ին պայմանագիր ստորագրելու իրավունքից զրկելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու), ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի համայնքապետարանի կարիքների համար ապրանքի ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/31» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.10.2024թ.-ին կազմված թիվ 5 արձանագրությամբ՝ «ՆԷԵՄԻԱ ԱՎԱԿԻՄՅԱՆ ԱՐԹՈՒՐԻ» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով համայնքի ղեկավարին դիմելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, ընդունել վարույթ:

2.ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի համայնքապետարանից պահանջել դատարան ներկայացնել թիվ «ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/31» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.10.2024թ.-ին կազմված թիվ 5 արձանագրությամբ՝ «ՆԷԵՄԻԱ ԱՎԱԿԻՄՅԱՆ ԱՐԹՈՒՐԻ» Ա/Ձ-ին պայմանագիր ստորագրելու իրավունքից զրկելու մասին կայացված որոշման և թիվ «ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/31» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.10.2024թ.-ին կազմված թիվ 5 արձանագրությամբ՝ «ՆԷԵՄԻԱ ԱՎԱԿԻՄՅԱՆ ԱՐԹՈՒՐԻ» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով համայնքի ղեկավարին դիմելու մասին կայացված որոշման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3.Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանող ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի համայնքապետարանի կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

4.Եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2025թվականի հունվարի 10-ին:

5.Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

Դատավոր՝ Նաիրա Ավետիսյան

Digitally signed by AVETISYAN NAIRA 7501660379
Date: 2024.11.25 15:10:37 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am